Արձանագրություն N 2

ՀՀԿԱ-ՇՀԱՊՁԲ-15/8-16/14 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք.Երևան
Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 1,
ՀՀ կառավարության աշխատակազմի
վարչական շենք, ս/հ 19տնտ.

15 սեպտեմբերի 2016թ.
ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի

| | |
|---|---|
| նախագահ (ԳԱՊ)՝ | Աշոտ Գրիգորյան |
| գնահատող անդամներ (ԳԱ)՝ | Աշոտ Ավետիսյան |
| (ԳԱ)՝ | Ջուլիետ Համբարձումյան |
| բացող անդամներ (ԲԱ)՝ | Դավիթ Գրիգորյան |
| (ԲԱ)՝ | Լիլիթ Մաղոեսյան |
| քարտուղար՝ (ՄՀժ) | Հայկ Խաչատրյան |

Հայտերի բացման արդյունքների մասին

Գնահատող հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց յուրաքանչյուր չափաբաժնի գնման առարկայի ընդհանուր (նախահաշվային) գները՝

| Չափաբաժնի համարը | Անվանումը | Ընդհանուր (նախահաշվային) գինը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| 1 | Դյուրակիր համակարգիչ | 1,950,000 |
| 2 | Տպիչ/պատճենահանման մեքենա/սկաներ (գունավոր, բազմաֆունկցիոնալ լազերային) | 710,000 |
| 3 | Պրոյեկտոր | 550,000 |
| 4 | ip հեռախոս | 130,000 |
| 5 | Ձայնագրիչ | 140,000 |
| 6 | Տվյալների կրիչ | 234,000 |
| 7 | Պլանշետային համակարգիչ | 350,000 |

Հանձնաժողովի քարտուղարը հայտնեց, որ 15.09.2016թ.-ի ժ 10:00-ին գնահատող հանձնաժողովի առաջին բացող անդամը www.armeps.am կայքի միջոցով էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգում իր կատարած նշումներով երկրորդ բացող անդամի դիտարկմանն է ներկայացրել բացման ենթակա հայտերի ցուցակը, որից հետո երկրորդ բացող անդամը հաստատել է իրեն ներկայացված հայտերի ցուցակը: Հաստատումից հետո բեռնված հայտերի բացման մասին արձանագրությունը (Համակարգում՝ հաշվետվություն) կցվում է սույն արձանագրությանը:

Հայտ ներկայացրել են՝

| Հ/հ | Մասնակցի անվանումը | Մասնակցի հասցեն |
|---|---|---|
| 1 | <<Յունիքոմփ>> ՓԲԸ | ք. Երևան, Ե. Չարենց 37 |
| 2 | Ա/Ձ Գրիգոր Այվազյան | Արարատի մ., գ. Ոստան, Թեհլերյան 14 |

Մասնակիցների հայտերի գնահատման մասին.

Բոլոր մասնակիցների.

- Հայտերը կազմված և ներկայացված են հրավերի պահանջներին համապատասխան.
- Բացված հայտերում հրավերով պահանջվող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը առկա են.
- Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան.
- Գնահատող հանձնաժողովի գնահատող անդամների կողմից բոլոր մասնակիցների հայտերը գնահատվել են բավարար՝ բացառությամբ գնային պայմանները, քանի որ դրանք գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

Մասնակիցների կողմից ներկայացված գնի առաջարկները.

| Հ/հ | Անվանումը | Քանակը /հատ/ | Յունիքոմփ ՓԲԸ | ԱՁ Գրիգոր Այվազյան |
|---|---|---|---|---|
| | | | Առաջարկված գները առանց ԱԱՀ /ՀՀ դրամ/ | |
| 1 | Դյուրակիր համակարգիչ | 3 | ---- | ---- |
| 2 | Տպիչ/պատճենահանման մեքենա/սկաներ (գունավոր, բազմաֆունկցիոնալ լազերային) | 1 | 939,300 | ---- |
| 3 | Պրոյեկտոր | 1 | ---- | ---- |
| 4 | ip հեռախոս | 2 | 131,600 | ---- |
| 5 | Ձայնագրիչ | 2 | ---- | ---- |
| 6 | Տվյալների կրիչ | 3 | ---- | ---- |
| 7 | Պլանշետային համակարգիչ | 1 | ---- | 388,500 |

ԵՏՄ անդամ երկրի արտադրության ապրանք չի առաջարկվել:

<u>Գնահատող հանձնաժողովի որոշումների մասին</u>

**Գնահատող հանձնաժողովը որոշեց՝**

1. ՀՀԿԱ-ՇՀԱՊՁԲ-15/8-16/14 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի նիստը կասեցնել՝ գների նվազեցման շուրջ բանակցություններ վարելու նպատակով:

*Կողմ՝ 3, դեմ՝ 0*

2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել նույն վայրում՝ 2016թ.-ի սեպտեմբերի 20-ի ժամը 12:00-ին:

*Կողմ՝ 3, դեմ՝ 0*

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝ | ________ | Աշոտ Գրիգորյան |
| գնահատող անդամ (ԳԱ)՝ | ________ | Աշոտ Ավետիսյան |
| | ________ | Ջուլիետ Համբարձումյան |
| բացող անդամներ (ԲԱ)՝ | ________ | Դավիթ Գրիգորյան |
| (ԲԱ)՝ | ________ | Լիլիթ Մաղդեսյան |
| քարտուղար՝ (ՄՀմ) | ________ | Հայկ Խաչատրյան |